ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 դեկտեմբերի 2019թ. N 81-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով Զրարեր բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագիրը՝ կարգադրում եմ.

1.Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքերի՝ Զրարեր գյուղի պահակատան և պահեստի, դուրսգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ձևակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝
Միշա Եղիազարյան, համայնքի ղեկավարի տեղակալ,

հանձնաժողովի անդամներ՝
Մուշեղ Հարությունյան, Զրարեր բնակավայրի վարչական ղեկավար,
Դանիել Դանիելյան, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Շուշիկ Ասատրյան, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ,
Ավետիք Ասոյան, համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),
Արման Օհանյան, համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ):

2.Հանձնաժողովին՝
ա)երկու շաբաթվա ընթացքում իրականացնել Զրարեր գյուղի պահակատան և պահեստի դուրսգրման աշխատանքները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և

էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31 ի N 787 Ն հրամանով հաստատված կարգի.

բ) կազմել նշված գույքերի դուրսգրման ակտ և ներկայացնել:

3.Զրաբեր գյուղի պահակատան և պահեստի դուրսգրման աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնել դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված եզրակացությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 04
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

փողոց 1/13

<<19>> 11 2019 թ

28

Ձեր N 2179 հանձնարարականին ի պատասխան տեղեկացնում ենք , որ Ջրաբեր բնակավայրի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող՝ պահակատունը և պահեստի շենքը գտնվում է վատ վիճակում և ենթակա է դուրս գրման:

Վարչական ղեկավար՝ Մ Հարությունյան

9 3549 16.01.19